

Ժամկետային ավանդի տարեկան տոկոսային եկամտաբերության հաշվարկման կարգ

Բանկային ավանդների ներգրավման մասին» ՀՀ օրենքով «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ-ի կողմից ֆիզիկականան ձանցից և անհատ ձեռնարկատերերից ընդունվող ժամկետային ավանդների տարեկան տոկոսային եկամտաբերության հաշվարկման կարգը հետևյալն է.

ՀՀ դրամով, ԱՄՆ դոլարով, Եվրոյով, ՌԴ ռուբլով ավանդների տոկոսագումարների ամսական վճարմամբ ավանդների տարեկան տոկոսային եկամտաբերությունը հաշվարկվում է ՀՀ Կենտրոնական բանկի կողմից սահմանված կարգով՝ էլնելով հետևյալ բանաձևից՝

1. $APY = (1 + r / n)^n - 1$, Որտեղ՝

APY – Ավանդի տարեկան տոկոսային եկամտաբերությունն է (APY – Annual Percentage Yield)՝ ցույց է տալիս, թե որքան կկազմի ավանդի տարեկան եկամտաբերությունը ավանդատուի կողմից ավանդի հետ կապված պարտադիր վճարներ կատարելու և ստացված տոկոսագումարները մայր գումարին ավելացնելու (կապիտալացման) արդյունքում:
r – Տարեկան պարզ տոկոսադրույքն է (r – Annual Rate of Simple Interest)՝ տարեկան կտրվածքով ավանդային պայմանագրով սահմանված տոկոսադրույքն է, որի հիման վրա Բանկը հաշվարկում է ավանդատուին վճարման ենթակա տոկոսագումարները:
n – Մեկ տարվա ընթացքում տոկոսագումարների կապիտալացման հաճախականությունն է՝ ցույց է տալիս, թե մեկ տարվա ընթացքում քանի անգամ է կատարվում ավանդի գումարին տոկոսագումարների ուղղակի մուտքագրումը կամ ավանդատուին տոկոսագումարների ուղղակի վճարումը:

ՀՀ դրամով, ԱՄՆ դոլարով, Եվրոյով, ՌԴ ռուբլով ավանդների տոկոսագումարների վճարումը ժամկետի վերջում վճարմամբ ավանդների տարեկան տոկոսային եկամտաբերությունը հաշվարկվում է հետևյալ բանաձևից՝

$A =$	N	K_n	
	$\sum_{n=1}$	$(1 + APY)^{\frac{Dn}{365}}$	

որտեղ՝

A - ավանդի սկզբնական գումարն է:

2. n - ավանդի դիմաց դրամական հոսքերի հերթական համարն է:

3. N - ավանդի դիմաց դրամական հոսքերի վերջին համարն է (ներառյալ նաև ավանդի ներդրման պահին դրամական հոսքը), որից հետո ավանդային պայմանագրի ժամկետը համարվում է ավարտված:

4. Kn - ավանդի ներդրման պահին և/կամ ավանդի գործողության ընթացքում ներդրված ավանդի և/կամ կապիտալացված տոկոսագումարների, առկայության դեպքում պարտադիր վճարների հոսքեր:

5. Dn – այն թիվն է, որը ցույց է տալիս, թե քանի օր է անցել ավանդի ներդրման օրից մինչև ավանդի դիմաց կատարվող հերթական^a n-րդ դրամական հոսքերը ներառյալ: Այն դեպքում, երբ ավանդի ներդրման պահին է դրամական հոսքերը, $D1 = 0$:

6. Ավանդի ժամկետի համար հիմք է ընդունվում ներգրավման ժամկետի յուրաքանչյուր միջակայքի առավելագույն արժեքը:

Որքան հաճախակի լինի տոկոսագումարների կապիտալացումը, այնքան բարձր կլինի տարեկան տոկոսային եկամտաբերությունը: «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ -ի կողմից ավանդի հետ կապված պարտադիր վճարներ չեն սահմանված: